

Կանոնագրության

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ



ԲՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ




թիվ 8



ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ




ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆԴԻՍ **هنا را كيداد** HANRAKIDAG
ՀԱՐԱԹԱԿԱՆ **مجموعه علوم** JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE
Է. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 8 || 28 ՓԵՏՐՈՒԱՐ 1904

ԳԵՂԱՍ - ԱԳԱՍ

Լ. ՍՐԱՊԵԱՆԻՆ



Սիրուն, ամենի, զոյգ գառնուկ
Քաղցրածալիս ու փափուկ.
Ո՛ւր էք, ո՛ւր
Հո՛գւոյս հուր:
Փնտեմ, բայց չեմ գտնե՛ր ձեզ,
Կը նեններուիմ բոցակեզ.
Ձկա՛յ լոյս
Իմ անյո՛յս:
Ձեր պատկերին կը նայիմ,
Կը տառապիմ ու կ'այրիմ.
Դեմքով վարդ
Դուք զուարթ:
Ինչո՛ւ կ'այրիմ դեռ ես հոս
Մինչ դուք ինձ մօտ չեք ափսո՛ս.
Անհո՛ւն վիշտ,
Ունիմ միշտ:
Հարազատիկդ Արամ,
Դիրկդ է անուշտ ո՛վ Դեղամ,
Լսե՛մք հող
Թանա՛մ քող:

Մ. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ



ԻՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ ԳԱԻԱՌԻ ԿԵՄԱՆՔԷՆ

ԱՄՏԾՆ ԶՈՂԵՐԸ

(Շարունակութիւն 7րդ թիւէն եւ վերջ)

Բայց եկաւ ատեն մըն ալ, երբ անբաւական համարուեցան այս բոլորը, ու ծերունի ծնողքը հաստատութիւն գիտնալով թէ՛ ուսանողական զբաղումներն իսկ ծանր կը կշռեն սիրական զաւկին ուսերուն, անմիջապէս զայն դպրոցէն հանեցին, շատ համոզիչ պատըրուակ մը պատրաստելով անոր բողոքներուն հանդէպ: Յոյց տուն թէ՛ արդէն ուսման բաւարար պաշար մը իւրացուցած է՝ փոքրիկ առեւտուրի մը սկսելու համար, ու հրապուրիչ եղանակներով՝ այդ կարգի զբաղում մը սարքեցին իրեն, շեշտելով մի և նոյն ատեն, թէ առայժմ չա՛հ մը չէ՝ որ պիտի սպասէին անկէ, այլ սո՛սկ զուարճալի վարժութիւն մը, կամաւոր ժամանց մը, որ սակայն ապագայ լուրջ ձեռնարկներու յառաջաբանը պիտի ըլլար: Այս ճարտարութեամբ ամէն ինչ կարգադրելէ յետոյ, շատ հասարակ, թեթեւ տկարութեանց անուններ վերագրեցին այս առօրեայ անհանգստութեանց, որոնք աղուն կողմէ սկսած էին զգացուիլ, աւերիչ ախտին առօրեայ առաջացումին համեմատութեամբ:

Որքէն, երջանկաւէտ հոգածութեան մը բոլոր վայելքներէն չընկալատուած. բնա՛ւ չպիտի կասկածէր ի հարկէ, իր իսկական վիճակէն: Ուստի, նոյն իսկ ուրախութեամբ սկսաւ դարձանուիլ բժիշկներէն, լոկ իբրեւ ջերմահար կամ հարբուիի տրամադիր մէկը: Հիպոկրատի սաները, ամենէն հմուտներէն ու կարողներէն ընտրուած, տարիներով այցելեցին այսպէս խորէնին, որուն ըզբօսական սովորոյթ մը կը թուէր այլ եւս՝ անոնց կատակախառն հարցումներուն պատասխանելը: Ծանրակշիռ խորհրդածութիւնները, սակայն, իրմէ հեռո՛ւ, տունին խորքը կը ծածկուէին, ծնողքին ու բժիշկներուն միջեւ, որոնք առօրեայ հրահանգներուն հետ՝ անկասելի ազդեցութիւն այժմէական աւերները կը հաղորդէին սարսափահար ընտանիքին:

X

Դպրոցէն դուրս, այս անկաշկանդ և կազդուրիչ կեանքն ալ տեսեց երեք տարիներու չափ: Բայց ա՛յսքան յոգնութեան և անխնայ ծախքերուն հանդէպ՝ հաստատուն յոյսի նշոյլ մը իսկ

կը զլացուէր վշտաբեկ ծնողքին : Վերջնական աղէտքին սրարչաւ ընթացքը , կը յապաղէր միայն , օրերու տարտամ շարք մըն ալ չնորհելով դժբախտին : Ահա՛ ինչ որ հնար էր գնել գիտութենէն :

Ա՛լ հիմա՛ բոլորովին այլափոխուած էր Խորէն : Նիհարութեան բովանդակ ծայրայեղութեամբ՝ կմախային յօգաւորում մը դարձած էր Ֆիզիքական ամբողջ , ու երբեմնի հրացայտ աչքերը՝ ներս նահանջած , թախծագին թաւալումներուն մէջ՝ ներաշխարհի խաւարակուռ անյուսութիւնը կը թարգմանէին : Ճակատը՝ դալկուն ու խոնջէնքի կնճիռներով ստուերոտ , այտերը՝ ահռելի ցցունքներու մէջ աւերակ և անարիւն չրթունքին ջղաճիգ պրկումներու վրայ՝ անտանելի տառապանքի մը տարտամ չլունջը կարծես կը թեւածէր :

Յաճախ իրեն կը հանդիպէի փողոցին մէջ , հեռունէն ճանչնալով իր դողահար քայլափոխները , թանձր հագուստի ծալքերուն տակ , ա՛լ աւելի նրբացած ու վտիտ՝ կուգար կ'անցնէր ան , անդրչիրիմեան ստուերի մը նման , մարմրուն ժպիտ մը , կիսաձայն մըմունջ մը թռչելով՝ իբրեւ պատասխան պատահական հարցումներու :

Ձգած էր ամէն աշխատութիւն , որովհետեւ ո՛չ մէկին կը տուկար , ու ճանձրոյթ միայն կ'զգար ամենէն դիւրատար , զուարճալի զբաղումներէն նոյն իսկ : Ձեռքերը միշտ վերաբկուն գլորպաններուն մէջ , լուռ ու տխուր կը տեսնէի զինքը նաև տօնական աղմկալից ակումբներու մէջ , կ'ուզէր դիտել աչքով գէթ վայելել կայտառ կեանքին բաղձալի հրապոյրները , որոնց չէր կրնար մասնակցիլ : Ա՛հ կարելի՞ է երեւակայել արգեօք , պարագայ մ'աւելի դժնդակ ու կսկծալի , քան վիճակը՝ հիւանդ երիտասարդին : Թեւակտուր թռչուն մըն է ան , նետուած գարնանագեղ բուրաստանի մը գոգը : Տարիքի բերումներէն ներազդուած աշխատելու , բարձրանալու եւ ապրելու անսահման տենջ մը սընուցանել ու... չի կրնա՛լ : Բուռն խանդաղատանք մը զգալ ամէն կողմէ ընծայուած փայփայանքներուն , խնամքներուն հանդէպ , ու ակամայ՝ հծծիւններով միայն պատասխանել... : Ծշմարիտ ծրնողքները միայն կ'ուզեն գիտակցիլ ա՛յն ահռելի եւ աղէխարժ պայքարներուն՝ որոնք կը մղուին անոր ներսը , անգութ աւելիքին ու երախտագէտ գաւկին միջև : Այսպէս . Խորէնին ծնողքն ալ խորապէս ըմբռնուած , թէ՛ անոր սրտնեղ , դիւրագրգիռ ու մեղամաղձիկ բնաւորութիւնը՝ կամքէ անկախ Ֆիզիքականին ուղղակի արդիւնքներն էին բնականօրէն . օրըստօրէ կը կրկնապատկէին վարմունքի անհուն քաղցրութիւննին : Բացարձակ արտօնութիւն եւ ամէն կերպ դիւրութիւններ ալ տուած էին իրեն , մի՛ միայն առօրեայ փսփսուքներուն անսալու համար , պտոյտ , ժա

մանց, ինչ որ ըզձար անխտիր: Ու խորէն, միշտ անթերի սնունդառութեամբ խնամուած, եղանակին յարմար հագուստներով պատապարուած, ժպիտ գգուանք ու փայփայանք միայն կը գըտնէր իր շուրջ, անկեղծ սիրոյ կազդուրիչ ցոլացումներ՝ տնեցի համակիր դեմքերէն, որոնց տաքուկ գրկին մէջ կրնար մտնալ իր ցաւատանջ էութիւնը, եւ յոգնած գլխիկն հանգչեցնել անոնց ծունկին վրայ, տենդաւար վայրկեաններուն: Երջանիկ հիւանդ մըն էր ան, բարեբախտ դատապարտեալ մը, — եթէ կարելի ըլլար հաշտեցնել այս քառեակ բառերը: Իրական կեանքէ տարողները, սակայն, լիովին կրնան ըմբռնել տալ:

Կազմուածքի քայքայման մոխիրին տակ եթէ անթեղուած ըլլար կեանքի յետին կայծ մ'իսկ, յոյսի հիւլէ մը գէթ, պիտի բռնկէր, պիտի արծարծուէր ան, այսքան անսահման գուրգուրանքներէն հրահրուած: Բայց, ափսո՛ս, յուսափրէպ պատրանք մըն էր այդ ակնկալութիւնը: Ծնողական անհաշիւ գոհողութիւնները կարելիութեան որոշ սահմանի մը մէջ միայն պիտի պտղաբերէին, եւ անկէ անդին՝ ամէն արդիւնք կը չքանար, եւ ուրիշ կ'սկսէր խանդակաթ սրտերու ջախջախիչ բազխումը՝ բնութեան անյեղլի օրէնքներուն հանդէպ: Ահա՛ թէ ինչպէ՛ս փակեց խորէն իր աչքերը, իբրեւ վերջին վայելք գգալով նաեւ՝ իր օրհնաթ ճգնաժամերուն մէջ, իր վրայ կաթիլթող տաքուկ, անկեղծ արցունքներուն գերագոյն անուշութիւնը:

×

Շատ հեռաւոր հորիզոններու տակ, Բղիւ թէմրահ գիւղին մէջ ճանչցայ միւս խորէն, յուսալից շառաւիղներէ մին այն համբաւաւոր գերդաստանին որ ազնուականի եւ հարուստի կրկնակ առաւելութիւններով բացառիկ դիրք մը վայելեց այդ նահապետական միջավայրերու խորը:

Տասնեակէ մ'աւելի տարիներ ետքը, երբ հոս կը հանդիպիմ համանուն եւ համատի վաղամեռիկի մը, դէմքով ու նմանութիւններով ալ՝ հազուադէպ նմանութիւններ՝ օժտուած. երբ կը տեսնեմ թէ երկուքն միեւնոյն կերպերով հիւանդութեան դժբաղդ տարիներուն տուայտանքը մոռցան, տաքուկ գիրկերու մէջ խնամուելով, չեմ կրնար չի զգածուիլ ցաւին այս երջանիկ երկուորեակներուն հանդէպ:

Այսքան տրդէն կը բաւէ: Որովհետեւ եթէ փորձէի պարզել հին խորէնին կեանքն եւ անհետացումն ալ, ըսելիքներս ճիշդ միւսինին բառ առ բառ կրկնութիւնը պիտի ըլլար: Նոյն գողունի անակնկալներուն մէջ ծագում առաւ անոր տկարութիւնն ալ, ժամանակի ընթացքին հետ՝ առեղծուածային հանգամանք մը ստա-

նալով հետզհետէ, նոյն անխնայ զոհողութիւնները՝ զինքը քաղաք փոխադրելու եւ դարմանելու համար, ու նոյնքան երկար տարիներու հիւանդագին շրջաններ՝ ո՛րքան աւելրփին առաջացումներէն տառապալից ա՛յնքան աւելի անթերի գուրգուրանքներով քաղցրացած... Վերջապէս մի եւ նոյն հոգեբուղիս արցունքներն ալ, վերջին վայրկեանին, անձնուէր արեւակիցներու ներսերէն քամուած, ուր՝ օր աւուր նորոգւող վէրքի մը կսկիծով յաւերժացած է իր յիշատակը: Բայց բոլոր այս նոյնութիւններէն իբրեւ անջատօրէն նկատելի պարագայ, չեղտե՛մ միայն թէ՛ չա՛տ աւելի գեղեցիկ ապագայի մ՛առաջնորդող տաղանդի ակնագրաւ ցոլքեր նշմարուած էին անոր խոհուն ճակտին վրայ, ի՛նչ որ ամսասնքով յիշած է յաճախ իր բանաստեղծ հօրեղբայրը:

×

Իրական կեանքը լեցո՛ւն է այսպիսի ինքնատիպ պատմութիւններով, որոնց ոլորքներուն մէջէն՝ մասնաւորապէս երկու ակնաբուխ տեսակէտներ կ'ազդէն մեր սրտին:

Թարմածիլ տաղանդներու վաղահաս զրաւումին յաւիտենական տուամը, նախ, ամենէն ահռելի աղէտը՝ զոր կարելի ըլլար երեւակայել, մարդկային ապրուածքի դժնդակ դիմայեղումներուն մէջ:

Եւ ասոր հետ, ճշմարիտ ծնողութեան դարաւոր դիւցազներգութիւնը, որ անուանական աշխարհին մէջ իսկ իր բնագոյնին գոյութիւնը կը զգացնէ, ու մարդ-էակը կը հասցնէ արժանիքի գերազանց բարձրացումին, պատկառազդու արարքներու անվերջ շարք մը պտղաբերելով՝ անյիշատակ ժամանակներու մշտնջենաւորութեամբ՝ մինչեւ այսօր:

Սակայն, կեանքի յարափոփոխ պատկերաշարներուն մէջ՝ իւրաքանչիւր դրուագ իր հակադրութիւնն ալ ունի անխտիր: Բնա՛ւ չկայ եղելութիւն մը, որուն առջեւ խանդավառ հիացումով յափշտակուելէ յետոյ, քայլ մ՛անդին պատահած չըլլանք՝ հակադիր անակնկալին: Ու գաղափարներու բնական զուգորդութեամբ անկարելի կ'ըլլայ չանդրադառնալ բոլոր այն լքումներուն ալ վրայ, որոնց տուայտանքը ո՛ր եւ է բացատրութեամբ որակել անկարելի է: Ի բնէ քաջառողջ, առոյգ ու խոստմնալից պարմանիներ, կենսական վառվռուն յոյսերով ու յոյզերով տրոփուն, որոնք կը թռչնին, կը քայքայուին, տարիքի ամէնէն բեղմնաւոր ու փափուկ շրջաններուն մէջ: Ու բուն իսկ այդ լքումին արդիւնքն եղող հիւանդագին վիճակի միջոցներուն՝ սնարուն վերեւ անյուսութիւնն է միայն որ կը հսկէ: — Սփոփիչ ստուեր մ՛իսկ անծանօթ է իրենց, ու չկայ կարեկից ձեռք մը՝ ատեն աւտեն յարմար սնունդ՝, կամ գաւաթ մը ջուր մօտեցնելու հա-

մար հիւանդին, որ շատ օրեր՝ չարժելու անկարող իսկ լինելով հանդերձ՝ ինք կ'ընէ ամէն ինչ. ո՛ւր կը մնար բժշկական փրկարար հրահանգներու գործադրութիւնը, եւայլն:

Շատ ծնողք, որոնք չեն վարանիր վհատուժով փնացնել թարմ կեանքի ուռճալից բողբոջումները, և շատ արդարացի կը համարեն զաւկին զոհուիլը՝ իրենց մնացորդ տարիներուն համար՝ անյաբ յղփացումի աղբիւր մ'աւելի ընձեռելու յամառութեամբ լարուած: Ահաւասիկ հակադրութեան միւս եզրը:

Երջանիկ խորէններ: Երջանիկ՝ ձեր տօգոյն տարիներէն մինչեւ այսօր ալ, երբ ծնողական սփոփարար գիրկէն շատոնց բաժնուած՝ կ'ապրիք սակայն անոնց անկեղծ սրտին մէջ: Անոնք կատարեցին իրենց պարտքը, և արժանի են գէթ խղճի հանգստութեան: Մարդկօրէն կարելի ամէն զոհողութիւն երբեք չխնայեցին. և եթէ հնար ըլլար՝ սիրով պիտի կիսէին իրենց կեանքը, ձեր անարին երակներուն մէջ քչիկ մ'աւելի կենսանիւթ ներարկելու համար:

Լևոն Մարաշլու

Բարոյական Խրատներ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ՓՈՔՐԻԿ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

3. — Յարատեւութիւն

Տղոց նկարագիրը կազմող լաւագոյն յատկութիւններէն մին ալ յարատեւութիւնն է: Երատեւութիւն՝ ո՛չ թէ ուրիշի մը պատկանող բան մը ուզելու մէջ — զոր կամակորութիւն կը կոչենք, — այլ յարատեւութիւն՝ իր անձնական գործերը տեսնելու մէջ: Այն տղան որ գործ մը սկսած է ու կը շարունակէ մինչեւ վերջը, նկարագրի հաստատ հիմ մը կազմած է իր էութեան մէջ: Ամէն ոք կրնայ վստահ ըլլալ թէ՛, այսպիսի տղայ մը մեծ գործեր կրնայ տեսնել: Որովհետեւ յարատեւութեան ռօղի ունի ան՝ կրնայ իր գործերուն մէջ հանդիպած դժուարութիւնները դիւրութեամբ անհետացնել:

Խիստ շատեր կան որոնք լաւ կ'սկսին գործ մը, բայց ցաւալի է ըսել թէ՛ շատ քիչ են այնպիսիներ որոնք լաւ կը վերջացնեն իրենց լաւ սկսած գործը:

Տղաքներ գիտնալու են թէ ո եւ է գործ իրեն յատուկ դժուարութիւններն ունի, եւ յաջող տղան ան է որ բոլոր ուժովը կ'աշխատի իր սկսած գործն ի գլուխ հանելու:

×

Ուր որ սիրտը նուազի, հոն ձեռքերը անգործ են:

— Արդարութիւնը մեր կեանքին եւ ստացուածոց ապահովագրութիւնն է, եւ յարատեւութիւնը՝ մեր անոր համար վճարած գինը:

— Եթէ պարտականութիւններդ կատարելու մասին յաղթուելէ կը վախնաս, գիտցիր որ պարտութիւնը ճիշտ մօտդ է:

— Մի՛ խօսիր խաղողին թիւս ըլլալուն վրայ, գիտցիր որ անոնք քաղցր են, եւ թէ պատուաւոր միջոց մը ունիս զայն ճաշակելու:

Յարատեւ ըլլալ, իւրաքանչիւր օր կարելիին լաւագոյնը ընել, նկարագիր մը շինել որ անարատ է եւ ուժեղ, որ ճշմարիտ է եւ սիրով քաղցրացած. ահա բարձր եւ ճշմարիտ յաջողութիւնը շահելու միակ ճամբան:

4. Պատուանիւր. — Մաքուր անուն մը

Ամերիկայի մէջ Գոնսօլիսէյք րեյլ ուեյ Գրմբէքի երկաթուղիի ընկերութիւնը լաւ սովորութիւն մը ունի: Իր պաշտօնեաներուն մէջ օրինազանցութիւն ընողներու անունին քով սեւ նշաններ կը դնէ, եւ իւրաքանչիւր տարւոյն վերջը անոնք որ ամէնէն շատ սեւ նիշեր ունին, պաշտօնէ կը դադրեցնէ: Սոյն ընկերութիւնը անգամ մը նոր տարւոյ առթիւ, իր պաշտօնեաներուն բոլորին ալ յանցանքները ներելով, սեւ նիշերը սրբեց, որով պաշտօնեաները կրցան յաջորդ տարի գործերնին շարունակել:

Դուն ալ, փոքրիկ տղայ, գործաւոր մ'ես Աստուծոյ մեծ գործարանին — աշխարհքի — մէջ: Ուշադրութիւն ըրէ որ Աստուծոյ քեզի յանձնած գործին մէջ սխալներ չ'ընես: Անոր քեզի տուած հրամաններուն գէժ չի գործես, որով քու անուանդ առջեւ սեւ յուռենիշներ չառնես:

Ինչպէս որ վերի ընկերութիւնը տետրակ մը ունէր պաշտօնեաներուն անունը պարունակող, Աստուած ալ գիրք մը ունի որուն մէջ քու անունդ գրուած է — քու կեանքդ է ան գիրքը —

Աստուծոյ քեզի տուած ամէն մէկ օր կեանքիդ մեծ գրքին մաքուր մէկ էջն է։ Ամէն առաւօտ աղօթք ըրէ Աստուծոյ որ քեզ շնորհք տայ, որպէս զի իւրաքանչիւր օրուան կեանքիդ մաքուր էջին մէջ, քու անունիդ առջեւ, պատուանիչեր առնես քու տեսած լաւ գործերուդ համար։

Մաքուր անուն մը վաստկիլ Աստուծոյ եւ մարդոց առջին, ահա՛ բարոյական եւ տեւական պատուանիչը։

X

Նկարագրի փորձիչը միշտ սեւ բիծ մը կը փնտռէ մեր անունին վրայ, ուրեմն մեր անունը պահելէ աւելի ջանանք զայն զօրացնել։

— Ագամանդին վրայ գտնուած անմաքութիւնը յղկելով կ'անհետանաւ, բայց անուան մը վրայ զետեղուած բիծերը սրբելու միջոց մը գտնել անհնարին է։

— Ազնիւ տղայ մը միշտ ուրիշին կը գթայ։


— Բարի անունը անգին գանձ մ'է. որուն տէրը ըլլալ փափաքող մը՝ նըշանկութեան քաղաքին արուարձաններուն մէջ կը թափառի։ Սոյն գանձը վայելողներ միայն ունին ճշմարիտ երջանկութիւնը։

— Բարեգործութիւններ ընելէ աւելի, բարի անուն մը ունեցիր, եթէ կ'ուզես որ անմահ յիշատակ մը թողուս այս աշխարհի վրայ։

ՍՐՏԱՀԱՆԳԻՍ




Նշանաւոր մարդ մը երբ ինձ այցելութեան գայ, կ'սկսիմ պարծենալ։ Ինչո՞ւ արդեօք մաս մը կը մնայ իմ քովս իր պատիւներէն, մեծութենէն ու հարստութենէն։ Իսկ թէ որ ես հարուստ եմ՝ կ'ամչնամ երբոր հասարակ մարդ մը ինձ այցելութեան գալու ըլլայ։ Ասալ ուրիշ ծաղրական գործողութիւն։ Կը վերցնէ՞ արդեօք այս մարդը մաս մը իմ բարօրութենէս. իր թշուառութենէն մաս մը կը թողո՞ւ ինձի։



Acariens — Accaparement

կազմութիւնը: Հովանոցը դոնդողային կազմուածք եւ գմբեթաբլ սկաւառակի մը ձեւը ունի, որու ներքին երեսին մէջ՝ կեդրոնը կը գտնուի բերանը: այսպէս կենդանին զաշտային սունկի մը ձեւը կ'ունենայ: Հովանոցին եզերքը 8 կամ 16 մասերու բաժնուած է: որոնք իրարմէ զատուած են պզտիկ գործարաններով՝ զգայնութեան գործարանները: Բաժնուած եզերքներէն իւրաքանչիւրին վրայ կան 1-8 հատ լարեր՝ որոնք խողովեան գործարանի տեղ կը բռնեն: Բերանին չուրջը կ'երկարին չորս հատ բազուկներ: որոնք իրար միանալով կեդրոնը քառակուսի մը կը ձեւացնեն որ արգասաւորութեան գործարանները կը պարունակէ: բերանը իբր սրբան կը ծառայէ: Ստամոքսը կը գտնուի հովանոցին վերին գագաթին վրայ և բերնին կը միանայ որկորով որ ամբողջ հովանոցին թանձրութիւնը կը կտրէ կ'անցնի: Այս կենդանիին հակիրժը ծնունդ չի տար ուղղակի իրեն նման արարածի մը, այլ պողիպտի պէս կենդանի մը յառաջ կը բերէ որ ժայռի մը փակած կը մնայ, կամաց կամաց կը ճիւղաւորուի և իւրաքանչիւր բաժանումէն կը կազմուի ամբողջական կենդանի մը:

Acariens, Ակարածեւ. — Մամուկներու կարգին կը պատկանին այս կենդանիները. որովայնինն անոնջատուած չէ գլխաւանջէն. աչքերնին երկու, երեք կամ չորս հատ է, երբեմն ալ բնաւ աչք չունին: Բերանին՝ ունեցած գործածութեանը համեմատ ասրբեր ձեւեր կ'ստանայ՝ ծամելու, ծակելու կամ ծծելու համար: Մարսողութեան գործարանը կը բաղկանայ ուղիղ խողովակէ մը որու ծայրը կը բացուի ստամոքսը: Շնչառութեան համար երբեմն բնաւ գործարան չունի և եթէ ունենայ՝ երկու միապաղաղ թոքերէ կազմուած է որոնք ստնաւորներու թոքերուն ներքին ճիւղաւորումները չունին: Այս կենդանիները հակիրժէ կը ծնին և միջատներու պէս կերպարանափոխութիւններ կը կրեն: Ոմանք տաքատ կ'ապրին ջուրերու մէջ, հողին կամ խոտերու վրայ, ուրիշներ կը գտնուին նեխելու վրայ եղող մարմիններու մէջ, ինչպէս պանիրի, ալիւրի, փտած փայտերու եւ կամ կտակեղէններու մէջ: Այս կարգին պատկանող կենդանի մըն է որ չունեւուն մարմինն վրայ հաստատուելով քոս հիւանդութիւնը յառաջ կը բերէ: մեր պատկերին մէջ տեսնուածը՝ մարդուն վրայ մակաբոյժ կենալով քոս կը պատճառէ:



Accaparement, Համագրաւում. — Շահագիտութեան տեսակ մըն է որով մէկը հրապարակի մը կամ արտադրութեան կեդրոնի մը վրայ գտնուած բոլոր մէկ տեսակ ապրանքը՝ արմաթիք, սննդեղէն և այլ պիտոյք մը, ամբողջովին կը գնէ, ետքէն առ-

Accélération — Acclimatation

անց մրցակցի ծախելու և իր շահուն համեմատ անոր բարձր գին մը որոշելու համար։ Այս տեսակ շահագիտութիւնը առաջները շատ տեղի կ'ունենար, երբ հաղորդակցութեան միջոցները տակաւին խիստ դանդաղ էին. ասկէ յառաջ կուգար անօրինակ սըղութիւն մը՝ մանաւանդ ցորենի և ուրիշ անմիջական պէտք ունեցող արմտիքներու՝ որոնց նախապատուութիւն կուտային շահագրէտները. ասոր առաջքը առնելու համար շատ երկիրներ մասնաւոր օրէնքներ հաստատած էին. երբ կը հաստատուէր որ անհատ մը այսպիսի շահագիտութիւն մը կ'ընէ և հաւաքած ապրանքները միջերանոցներու մէջ կը պահէ, անմիջապէս կը գրաւէին զանոնք և մէկ մասը աղքատներուն բաժնելէ յետոյ, մնացեալը՝ կառավարութիւնը ինք իր հաշույն կը ծախէր աժան գիններով։ Հիմա ալ արգիւտած է ան եւրոպական երկիրներու մէջ, սակայն մեծ աստիճանի մը վրայ տեղի կ'ունենայ Մ. Նահանգացի մէջ ուր քրքր անունով կը ճանչցուի։

Accélération, Երագում. — (Տիեզերագիտ.) Լուսաւորներու օրական երագումը. Եթէ արեգակը տիեզերքին մէջ անշարժ կենար երկնային գունտին կեդրոնը, բոլոր լուսաւոր կէտերը որոնք այդ գունտին մակերեսոյթին վրայ՝ արեւուն շուրջը կը դառնան՝ անոր հետ միասին պիտի անցնին միջօրէականէն ամէն օր. քանի որ թէ՛ արեւուն և թէ՛ լուսաւոր կէտերուն շարժումը որոշուած է երկնագնտին արեւելքէն դէպի արեւմուտք թաւալումով։ Սակայն արեգակն ալ ծիր մը ունի զոր կը գծէ մէկ տարուան տեւողութեան մէջ՝ արեւմուտքէն դէպի արեւելք շարժումով. ասկէ կը հետեւի թէ երբ արեգակն ու լուսաւոր կէտ մը նախորդ օրը միեւնոյն պահուն անցած էին միջօրէականէն, յաջորդ օրը արեգակը ¼ վայրկեանի չափ ետ կը մնայ իր երկրորդ շարժման պատճառաւ. հետեւաբար լուսաւոր կէտը օրական չորսական վայրկեանի յառաջացում մը կ'ունենայ երկնագնտի միջօրէականէն անցնելու մասին։

(Մեքենագիտ.) Տե'ս Cinématique բառը։

Acclimatation, Օդրնելութիւն. — Մեր ընտանի անասուններուն մեծագոյն մասը Ասիայէն ու Հիւսիսային Ափրիկէէն են, եւ մարդկութեան նախնական դարերու մէջ ընտելանալով՝ մարդուն հետեւած են կատարած գաղթումներուն մէջ։ Անոնցմէ ետք Յոյները եւրոպա բերին ու ընտելացուցին փասիանն ու սիրամարդը, Հռոմայեցիները Ափրիկէէն բերին բադը, ճագարը, կռունկը ևւն. Արաբները իրենց դացած տեղերը միասին տարին ուղտը, գոմէշն ու շերամը, 18րդ դարուն կիսուն Անգլիացիք Գանատանէն բերին սագը և ոսկեզօծ փասիանը։ Կենդանիներուն պէս բոյսերն ալ հասարակածային երկիրներէ բերուելով յարմարցուած են բարեխառն կլիմաներու։ Շատ եւրոպական երկիրներ մասնաւոր հաստատութիւններ ունին տարբեր կլիմաներէ բերուած կենդանիներն ընտելացնելու համար, ինչպէս Բարիդի Կենդանաբանական


Accumulateurs

Պարսեզը, Լոնտոնի Արքայական Պարսեզները, եւայլն: Կենդանիներն ու բոյսերը տարբեր կլիմաներու վարժուելու համար փոփոխութիւններ կը կրեն քիչ թէ շատ իրենց գործարաններու կազմութիւն մէջ ինչպէս նաւ բնաւորութիւններնուն ու արտաքին տեսքին վրայ: Մարդը՝ որ երկրագնդին բոլոր մասերուն վրա կ'ապրի, տարբեր կլիմայի մը մէջ անցած ատեն շնչառական գործարաններուն հիւանդութիւններ կը կրէ. Հասարակածին վրայ ապրող մէկը երբ բեւեռային երկիրներու մէջ կ'երթայ, շնչած ժամանակ շատ աւելի թթուածին ներս կ'առնէ և ասկէ յառաջ կուգայ Լեարդախտը:


Accumulateurs électriques, ելեքտրական կուտակիչներ. — Այս գործիքները ելեքտրականութեան իրական ընդունարաններ են որոնց բեւեռները հաղորդիչ թելով մը միացուելուն պէս ելեքտրական հոսանք մը յառաջ կուգայ: Նախ պարզենք թէ ինչ սկզբունքի վրայ հիմնուած է այս գործին: Ելեքտրական հոսանքի մը միջոցաւ ջուրը տարբազարած ժամանակնիս եթէ վոլտայաչափին բլաթինէ բեւեռներուն տեղ կապարի կտորներ դնենք, բացասական բեւեռէն ջրածինը կ'արձակուի, իսկ թթուածինը ոքսիտացնելով դրական բեւեռը՝ կապարի կրկնոքսիտ յառաջ կը բերէ: Հատելով վոլտաչափը բարդէն, միացնենք անոր երկու բեւեռները հաղորդիչ թելով մը. ելեքտրական հոսանք մը կը կազմուի որու անցած ժամանակ թթուացեալ ջուրը կը տարբազարուի կապարի կրկնոքսիտին ներկայութեանը, ջրածինը կը միանայ ոքսիտին հետ և թթուածինը կը հաւաքուի միւս կապարէ թերթին վրայ զոր կ'օքսիտացնէ: Հոսանքը կը դադրի երբ երկու թերթերն ալ հաւասար թանձրութեամբ կապարի կրկնոքսիտով ծածկուած են: Դիտուած է որ միեւնոյն վոլտմէթրի վրայ նոյն գործողութիւնը կրկնուելով՝ անոր կապարի թերթերը ա'լ աւելի խորունկ կ'օքսիտանան և յառաջ եկած հոսանքը աւելի՛ գորաւոր կ'ըլլայ: Այս սկզբունքին վրայ հիմնուելով շինած են հետեւեալ կուտակիչը որ իբր տիպար կը ծառայէ: Իւրաքանչիւր տարրը դրական ու բացասական՝ ձեւացած է ինքնիւր վրայ ոլորուած երկու Կ և Կ' կապարի թերթերէ որոնք իրարմէ անջատուած են կիւթաբէքքաի թերթով մը և վերջացած՝ դրական ու բացասական Դ և Բ բեւեռներուն համապատասխանող երկու դռնիներով. այս կազմածը ամբողջապէս ընկղմած է տասներորդ չափով ծծմբական թթու խառնուած ջուր պարունակող Ա ամանին մէջ (Պատ. 1) Այս գործիքը կազմելու՝ այսինքն կանոնաւորապէս բանելու վարձեցնելու համար նախապէս պատրաստիչ գործողութեան մը կ'ենթարկեն. յամորդաբար հակառակ ուղղութիւններով շաւ մը անգամներ ելեքտրական հոսանք մը կ'անցնեն մէջէն մինչև որ կազեր արձակուին. այս գործողութիւնը կը կրկնեն բաւական ժամանակ: Երբ անգամ մը գործիքը կազմուած է, ա'լ անկէ վերջը միշտ միեւնոյն ուղղութեամբ կ'անցնեն ելեքտրական հոսանքը զայն լեցնելու համար: Լեցնելէ ետքը շուտով գործածելու է զայն որովհետեւ ժամանակ անցնելէ ետքը անոր զօրութենէն մաս մը

Accumulateurs

կը կորսուի: Երբ շատ զօրաւոր հոսանք մը պէտք է՝ բաւական թուով կուտակիչներ իրար կը միացնեն զայն արտադրելու համար. եթէ շատ ելեքտրականութիւն կ'ուզուի ունենալ՝ կու-



Պատ. 1



Պատ. 2

տակիչներու բոլոր դրական բեւեռները զատ և բոլոր բացասականները զատ իրար կը միացնեն. իսկ ելեքտրական զօրութիւնը շատ ուզուած ժամանակ մէկ գործիքին բացասական բեւեռը յաջորդին դրական բեւեռին կը միացնեն յաջորդաբար: Ինչպէս յայտնի է կուտակիչները ելեքտրականութիւն չեն արտադրեր, հապա ընդունածնին դուրս կուտան: Գործնականի մէջ կիրարկուած կուտակիչները զանազան ձեւեր կ'ունենան՝ իրենց գործածուած տեղին համեմատ. միակ պայմանը որու ամենէն աւելի ուշադրութիւն կը տարուի, բեւեռները կազմող զինկի թերթերուն մակերեսոյթը կարելի եղածին չափ ընդարձակելն է որպէս զի ելեքտրականութիւնը կարելի եղածին չափ շատ ամբարուի. ասոր համար այդ թերթերուն երեսը խորտուբորտ կ'ընեն (Պատ. 2): Ելեքտրական կուտակիչ մը լեցնելու համար, եթէ պզտիկ է, պարզ բարդ մը կը բաւէ, իսկ ճարտարարուեստի մէջ գործածուածներուն համար, ընկանարար աւելի զօրաւոր ինժեներներու կը դիմեն: — Կուտակիչներու օգուտները խիստ գնահատելի է, կարելի է ամենայն դիւրութեամբ տեղէ տեղ փոխադրել զանոնք և ելեքտրական զօրաւոր հոսանքներ ունենալ անանկ տեղեր՝ ուր անկարելի պիտի ըլլար ելեքտրական ուրիշ ու եւ է գործիք հաստատել: Այս առաւելութիւններու փոխարէն անպատեհութիւններ ալ ունի. ամբարած ելեքտրականութիւնը շուտով կը պարպէ եւ երբ արտադրած հոսանքին ոյժը տկարանայ ա՛լ բանի մը չձառա-

ԶԱՐԵՌ-

ԸՆԿԵՐՆԵՐՈՒՄ

Տըխուր է օդը, ' ամպոտ արեգակն,
Որք կը տըխրեցնեն սիրտըս ու հոգիս:
Մերթ անձրեւ տեղայ հեղեղանուման՝
Վեհ տըրտմութեամբ մը համակելով զիս:

Ամպամած օդը ճընշէ մեր վըրայ՝
Սըմբեցնելով յոյս, իզձ ու երազ,
Որոնք պիտ'ըլլան մեզի ռահվիրայ՝
Երբ զարունը զայ զուարթ, հեզանագ:


Ա՛յ հոս չի լըսուիր գեղգեղը թըռչնոց,
Որուկ կարօտը կը քաջենք վաղուց:
Զի նըշմարելով ամպի կոյտերն հոժ՝
Անոնք սըլացան եթերն անմատոյց:

Ժիր երկրագործը մեղկութեամբ մը թոյլ՝
Կ'անցնէ օրերը շինական, անոյշ:
Եւ աստ երկինքի լոյսերը բոյլ բոյլ,
Վարագուրուած են քօղով մը անյուշ:

Գիւղին նախիրներ չունին երթեւեկ,
Այլ հանգիստ կ'առնեն գոմին մէջ ուրախ:
Իսկ մեր ծիերը չեն յոգնիր երբէք:
Եւ ոչխարներն ալ կը լեցուին փարախ:

Տիարպէթիր

Մ. ՊԱՍԹԱՅԵԱՆ



ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

5. — ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ ՆԻԻԹ ՄԸ

Հանրագիտակի պզտիկ ընթերցողներուն այսօր կ'առաջարկենք նոր տեսակ « Շարադրութեան նիւթ » մը որուն նպատակն է՝

1. Իրենց ներշնչել բարոյականութեան ոգին .
2. Իրենց իմացական եւ քննադատելու կարողութիւնը զարգացնել .
3. Շարադրելու վարժեցնել :

Հետեւեալը բարոյական մանրամասն մ'է, զոր կ'ենթարկենք իրենց քննութեան :

Պէտք է այս հասուածին վրայ իրենց կարծիքը յայտնեն՝ գրելով քե՛ր
Պէ՛տք էր որ Մարմիէ ետ տար 100 Փրանքնոցը եւ իր այս ա-
րարքը արժանի՞ է մասնաւոր գովասանքի եւ յիշատակութեան :


Փրանսական Ակադեմիայի անդամներէն Բսավիէ Մարմիէ, որ մեռաւ 84 տարեկան, շատ կը սիրէր Սէն գետին եզերքը թափառիլ եւ քարափին վրայ հին գիրք ծախողներու կրպակները պրկալըտել : Օր մը հին գիրքերու տուփի մը մէջ կը տեսնէ հետաքրքրական գիրք մը եւ քանի մը սու տալով կը գնէ : Հազիւ թէ քանի մը քայլ հեռացած էր, երբ տեղատարափ անձրեւ մը կը սկսի : Բսավիէ Մարմիէ կ'ախպուի սրճարանի մը բարձրաւանդակին վրայ ելլել : Հոն կ'սկսի քննել իր գնած հատորը : Թղթատած միջոցին, կռնդ կ'առնէ՝ իրաւութեամբ կ'ազատէ երկու էջի հանդիպելով զանոնք կ'անջատէ, եւ անոնց մէջ կը գտնէ 100 Փրանքնոց պանքտուն մը զոր հոն պահած էր գրասէր մը : Նոյն պահուն որոշակի իր ականջին կը հասնի երկու մարդոց խօսակցութիւնը : Անոնք ալ իրեն պէս բարձրաւանդակին մէկ կողմը ապաստանած էին՝ անձրեւէն պատապարուելու համար :

— Վաղը ամսագլուխ է : Կինս ու զաւակներս թշուառութեան մէջ են : Տունիս վարձքը վճարելու համար փարայ չունիմ : Վեց սու միայն շահեցայ այսօր՝ պատուանշան կրող պարոնէ մը որ հին գիրք մը գնեց : Հիմա, ահա, անձրեւը . ալ գործ չկայ, խեղճ տես առուտուրին ալ, շահուն ալ :

Պատուանշանով պարոնը Մարմիէն էր : Գանգատող մարդն ալ այն հնաժամաւոր սրմէ գնած էր 100 Փրանքնոցը պարունակող գիրքը :

Ակադեմականը, ուսքի կ'ելլէ, գրավաճառին ձեռքը կը բռնէ և 100 ֆրանքնոցը անոր ձեռքին մէջ կը սահեցնէ՝ ըսելով. « Ա՛ռ, բարեկամս, աս թուղթը՝ քեզմէ գնաց գիրքին մէջ մոռցեր էիր. . . »

Մեզի հասած գրութիւններէն ամենէն գեղեցիկն ու յաջող- ուածն պիտի հրատարակենք Հանրագիտակի մէջ, եւ հեղինակին պիտի նուիրենք Տեղագրութիւն Ս. Երուսաղեմի պատկերազարդ գրքէն օրինակ մը :



ԳԻՏԱԿԱՆ ԷԶԵՐ

ԳԼԽԵՐԿՆԻՈՐ ՕԶԵՐ

Կարգ մը օձեր կան որոնց վիզին մորթը ուռելով կ'ընդար- ձակուի եւ ետեւի կողմէն դիտուած ժամանակ գլխարկի մը երե- լոյթը կ'ընծայէ, Այս կենդանիներուն վիզին ոսկորները երկայն ու քիչ կլորցած են որով հանդարտ կեցած ժամանակը, ասոնք կը ծալլուին ողնաւունին երկայնքը եւ վերջը բնական մեծութիւնը կ'առնէ, սակայն երբ կենդանին կը գրգռուի, այս ոսկորները կը ցցուին եւ կը ձգտեցնեն վիզին մորթը որ՝ կ'ուռի: Մի եւ նոյն ժամանակ մարմինին յառաջակողմը հողէն վեր ուղղաձիգ կը կե- նայ, գաւազանի մը պէս ձիգ. իսկ պոչին կողմը, որ իբր յենա- րան կը ծառայէ, շարժուն է եւ կենդանին յառաջխաղացութեան կը ծառայէ:

Բնապատումները Նաժա անունը կուտան այս օձերուն որոնք չորս տեսակներու բաժնուած են: Ասոնցմէ մին է Ասիոյ մէջ ապ- րող Ակնոցաւոր օձը: Պարապ բան է հանդարտ կեցած ժամանակը այս կենդանին ակնոցները տեսնել ուղեւը. անոր կատաղած, այս- ինքն վիզին մորթը ուռած ժամանակն է որ կ'երեւի զոյգ մը բո- լորակներ՝ կիսաղեղով մը իրար միացած, որոնք իրական ակնոցի մը երեւոյթը կ'ընծայեն: Ակնոցաւոր օձը ամենէն աւելի կը սիրէ փտած ծառերու շրջակայքին մէջ, աւերակ պատերու ծակերուն մէջ, մացառի եւ քարի կոյտերու տակ, ապրիլ. իրիկուան կամ գիշերները դուրս կ'ելլէ պահուրտած տեղէն եւ բնակարաններու կը մօտենայ պզտիկ կրծող կենդանիներ որսալու համար. սովոր- ական սնունդներն են մանր ստնաւորները, թռչուններ, մողէս, գորտ, ձուկ եւայլն:

Պօպրան՝ հիւղակներու տանիքին վրայ եւ մինչեւ անգամ ծառերու գագաթը կը բարձրանայ թռչուններ որսալու համար։ Լաւ լողացող ալ է եւ կրնայ լայն գետերու մէկ եզերքէն միւսն անցնիլ։ որսը բռնածին պէս կը կլլէ առանց իր օղակներուն մէջ զայն խեղդելու, ինչպէս կ'ընէ Պօան։ Կ'ըսեն թէ այս օձերը՝ ինչպէս



Ակնոցաւոր Օձ

նաեւ բոլոր նաժաները իրենց թշնամիին վրայ յարձակած ժամանակնին թոյն կը թքեն։

Ակնոցաւոր օձերուն տարօրինակ կազմուածքը առիթ տուած է

կարգ մը աւանդութիւններու, նախապաշարումներու: Այսօր իսկ
Հնդկաստանի մէջ կան Փաքիրներ (մուրացիկներ) որոնք հաւատա-



Նաժաննրու դասակարգէն եղջերաւոր օժը

ցընել կ'ուզեն իրենց շուրջը հաւաքուած պարզ ժողովուրդին թէ՛
երկնատուր կարողութիւն մը ունին իրենց այդ վտանգաւոր կեն-

դանիններուն խածուածքէն անմնաս մնալու: Իրօք ալ կարծես թէ այդ մարդիկը մեծ ազդեցութիւն մը ունին այդ օձերուն վրայ: Միշտ իրենց քով կ'ունենան շատ մը ընտանեցած Ակնոցաւոր օձեր, որոնց կանոնաւոր շարժումներ ընել կուտան սրինգի մը վրայ եղանակ մը նուագելով եւ կամ զանոնք գրգռելէ ետքը, անմիջական կերպով անշարժութեան կը մատնեն: Կ'երեւի թէ այս հմայիչները ամենէն առաջ օձին սուր ախտները կը հանեն. զայն գրգռելէ ետքը հաստ կտաւի կտոր մը խածցնել կուտան եւ ուժով մը քաշելով ախտները կը կոտրեն: Իսկ կենդանիին խաղալ, այսինքն գետնէն վեր ուղղաձիգ կենալ, սորվեցնելու համար զայն կը գրգռեն, երբ ան գետնէն վեր ցցուելով յարձակելու կը պատրաստուի՝ հմայիչը մէկ ձեռքը հողէ աման մը անցնելով դէմ կը բռնէ, օձին գլուխը անոր զարնուելով կը ցաւցընէ:

Զ. Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԶԲՕՍԱՆՔ


ԿՆՃՌՈՏ ՀԱՆԳՈՅՑ ՄԸ



Քասիմի վէպը չէ որ պիտի պատմենք Հանրագիտակի ընթերցողներուն: այլ գիտական զուարճալի խաղ մը:

Երկու բարեկամներ գինեաւունը նստած կը զուարճանային. Ա.

սոնցմէ մին թաշկինակին երկու ծայրերէն բռնեց եւ ոլորելով չուանի մը ձեւը տուաւ անոր. դրաւ վայն երկայն մը սեղանին վրայ եւ առաջարկեց իր ընկերոջ անոր երկու ծայրերէն ամուր մը բռնելով մէջտեղը հանգոյց մը ընել՝ առանց ձեռքերէն մին թող տալու: Կ'երեւի թէ այդ բարեկամը ճարպիկ մէկը չէ եղեր. ինչու որ շատ աշխատեցաւ առանց յաջողելու: Նայիս գինեպանը որ բոլոր գինեպաններու պէս հետաքրքիր էր, — տեսնելով որ երկու ընկերները շատ զբաղած են բանի մը, կամաց մը անոնց քով գնաց եւ առաջարկեց ինք լուծել խնդիրը: Շիշ մը գինի գրաւ դրին եւ գինեպանը գործի սկսաւ, սակայն պարտապէս տեղը որովհետեւ կապ ընելն բացարձակապէս անկարելի կ'երեւար: Մեր բարեկամը որ խաղն առաջարկած էր, լաւ մը զուարճանալէ և շիշ մը գինին խմելէն ետքը երկու թեւերը մին բազուկին վրայէն և միւսը տակէն անցնելով՝ թաշկինակին երկու ծայրերէն բռնեց եւ քաշելով կապ եղաւ: Մեր պատկերը լաւ մը կը ցուցնէ թէ ձեռքերն ի՞նչպէս խաչաձեւելու են:



ԳՊՐՈՑԱԿԱՆ ԽԱՂԵՐ

ԳՈՐԾԱԽՈՐՆԵՐ

Բազմաթիւ աշակերտներ կրնան մասնակցիլ խաղին: Ամէն մէկ տղայ արուեստաւոր վարպետ մը կ'ըլլայ. օրինակի համար, առտաղձագործ, դարբին, պայտագործ, երկաթագործ, եւայլն:

Աշակերտներուն մէջէն շատ մը գործաւորներ եւս կը դատուին: Վարպետներէն իւրաքանչիւրը իբր իր արուեստանոցին մէջ նստած ձեւերով եւ շարժումներով ի գործ կը դնէ իր արուեստն, եւ կ'սպասէ գործաւորի մը գալուն: Գործաւորը կը ներկայանայ եւ վարպետը կը հարցնէ անոր, ի՞նչ արուեստ կ'ուզես: Եթէ գործաւորը գտնէ վարպետին արուեստն, սիրով զայն արուեստանոցին մէջ կ'ընդունուի, հակառակ պարագային ամեն արուեստանոցները կ'այցելէ եւ իրեն մի եւ նոյն հարցումը կ'ընեն: Եթէ ամենուն արուեստը չը յաջողի գտնել, այն ատեն ամբողջ խումբը կը հալածէ զինքը՝ ձեռքի թաշկինակովը: Խաղը վերջացած է՝ երբ տգէտ գործաւորը կը բռնուի:

ԿԱՐԵԻՈՐ ԶԵԿՈՅՑ ՄԸ

Հանրագիտակ երկու տարիէ ի վեր կանոնադրաբար հրատարակուելով, կարծենք թէ, բաւական վստահութիւն ներշնչեց իր յարատեւութեան մասին, սակայն զարմոնալի է տեսնել որ երբ մենք առանց վերապահութեան վստահութիւն կ'ընենք առաջին անգամ ներկայացնող բաժանորդներուն և քիչ ետքը բաժնեգիրքը դանձելու խոստումը ընդունելով թերթ կը ղրկենք, տարեշրջանը աւարտելէն տակաւին երկու ամիս ետքն ալ չենք ստանար կարգացում թերթերու դրամը: Հիմա որ ընթերցող հասարակութեան ճանչցուցինք մեր ձեռնարկին լրջութիւնն ու յարատեւութիւնը, որոշած ենք ապառիկի դրութիւնը վերցնել, ուստի կը խնդրենք որ առանձին նամակով մը անձնապէս թերթ ուղղողները բաժնեգիրք միասին ղրկեն. նոյնպէս մինչեւ հիմակ ուղղակի մեզ բաժանորդագրողները դրամը մեզ հասցենեն առանց յապաղումի. իսկ հոն ուր գործակալ ունինք, արդէն անոնք սկսած են բաժնեգիրները գանձել եւ չենք յուսար որ ո եւ է մերթուրի հանդիպինք քանի որ որոշ պայմանաժամէ մը ետքը ապառիկ թերթերը դադրեցնելու մտադրութիւն ունինք:

Տպագրիչ եւ Հրատարակիչ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ

ՊՈԼԻՍ, ՊԱՊԱԸ ԱՆԻ ՃԱՏՏԷՍԻ, ԽԻՐ ՅՏ. ԵՐՏԱՄ ԼԵՅՊԵՆ ԴԷՄ

Գաւառները գլխաւոր քաղաքներու մէջ բնդհանուր ներկայացուցիչներ ունի տպարանս, որոնց կրնան դիմել տպագրական ամէն տեսակի գործեր ունեցող, եւ կամ ո՛ր եւ է գրքի մը պէտք ունեցողները, եւ փոխարժէքն անոր վճարելով, կ'ընդունին ապապրանքները: Այս միջոցով իրենք կ'ազատին թէ՛ աւելորդ ծախսերէ եւ թէ՛ նամակի եւ այլ կորուստներէ. եւ ի՞նչ որ ամէնէն կարեւորն է, փոքր գումարներու փոխադրութեան համար յառաջ եկած դժուարութիւններէն ու հոգերէն կ'ազատին:

Գաւառներու մէջ Հանրագիտակի ՈՒԵԺ. Գործակալներու դիմողները կրնան սա առաւելութիւնն ալ վայելել որ, թէ՛ իրենց յանձնարարութիւնները կէտ առ կէտ կը կատարուին ամենակարճ ժամանակի մէջ եւ թէ միշտ վստահելի անձնաւորութիւն մը կ'ունենան իրենց մօտ պատասխանատու ամէն առթիւ:

ԽՐԱԿՐԱՊԵՏ-ԱՐՏՕՆԱՏԷՐ
ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆՏՊԱԳՐԻՉ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Նոր տարիէն սկսեալ Հանրագիտակ կը հրատարակուի շաբաթական 20 էջէ բաղկացեալ :

Վեցամսեայ ու եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր :

Ա Ր Ե Կ Ա Ն Գ Ի Ն Ն Է

Պոլսոյ համար

30 շրուշ

Գաւառաց »

35 »

Արտասահման

45 »

Հատը

30 փարայ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼՔ

Ամասիա, Հայկազուն էֆ. Սանդամուր
Ասաբազար, Աշոտ էֆ. Պաղպաղեան
Դոնեա, Տիգրան էֆ. Յ. Տիւրկէրեան
Եւթոկիա, Սաշիկ էֆ. Գ. Թաշճեան
Երզնկա, Պարոյր էֆ. Արզուման
Զմիւռնիա, Կարապետ էֆ. Մալէճանեան
Էրզրում, Տիգրան էֆ. Բրուտեան
Էրպա՛ն, Մխաբ էֆ. Ս. Մելգոնեան
Թայաս, Կարապետ էֆ. Գոճաեան
Թեփրսաղ, Ասատուր էֆ. Արսէնեան
Թրիպօլի Գրիգոր էֆ. Հ. Գարազաշեան
Խարբերդ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Կեօարիա, Երուանդ էֆ. Երկաթեան
Կիրասոն Թովմաս էֆ. Գարազաշեան
Կիւրին, Գրիգոր Մ. էֆ. Սանդամուր
Հալեպ, Կ. էֆ. Պօտիկեան
Հիւսէյնիկ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Մալաթիա, Արժ. Տ. Գրիգոր Վահ. Թաշճեան
Մարաշ, Արժ. Տ. Նէրսէս Քհ. Շահինեան
Մարզուան Արամ էֆ. Գարակէօղեան
Միացեալ-Նանանգներ, Մ. Մ. Բարակապուրեան և Ընկ.
Նիկովիդիա, Յակոբ էֆ. Տ. Ազարեան
Նիսաւր, Յովհաննէս էֆ. Փանոսեան
Շապին Գարա հիսաւր. — Գազիկ էֆ. Օղանեան
Պայպուրդ, Մասիկոն էֆ. Վարժապետեան
Սամսոն, Յովհաննէս էֆ. Նիքսարլեան
Սըվազ, Միհրան էֆ. Իսպիրեան
Տիարաքեփր, Լիոն էֆ. Սրապեան
Տիարաքեփր, Միհրան էֆ. Պասթաճեան
Օրսու, Յովհաննէս էֆ. Հէքիմեան